

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

<p>1. Ընդհանուր դրույթներ</p> <p>1.1 Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) գյուղատնտեսության և բնապահպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 95-1.3-Ղ4-1)</p> <p>1.2. Ենթակա և հաշվետու է Վարչության պետը անմիջական ենթակա և հաշվետու է Մարզպետին:</p> <p>1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ Վարչության պետին անմիջականորեն ենթակա և հաշվետու են Բաժնի պետերը:</p> <p>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի պետերից մեկը:</p> <p>1.5. Աշխատավայրը Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1</p>
<p>2. Պաշտոնի բնութագիրը</p> <p>2.1 Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</p> <p>1 Ապահովում է գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում ՀՀ Լոռու մարզպետին (այսուհետ՝ Մարզպետ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացումը:</p> <p>2 Ապահովում է մարզի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլխիտների դեմ պայքարի, կարանտինային պահանջների կատարման, ագրոկանոնների պահպանմանն ուղղված միջոցառումների աշխատանքների կազմակերպումը և վերահսկումը:</p> <p>3 Ապահովում է մարզային նշանակության ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման, ոռոգման ջրի հաշվառման, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության և ոռոգման համակարգի շահագործման իրականացումն ապահովելու աշխատանքները:</p> <p>4 Ապահովում է մարզի տարածքում անասնազվխաքանակի հաշվառման, անասնաբուժական ծառայությունների գործունեության, հակահամաճարակային միջոցառումների իրագործման, կենդանիների հիվանդությունների կանխման ու վերացման, արհեստական սերմնավորման կայանների, տոհմաբուժական տնտեսությունների աշխատանքների վերահսկման աշխատանքները:</p> <p>5 Ապահովում է մարզի գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, ագրարային ոլորտի տնտեսվարող այլ սուբյեկտներին արտադրության կազմակերպման և զարգացման գործում մասնագիտական, խորհրդատվական, ՀՀ պետբյուջեի կամ այլ դոնոր կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացվող աշխատանքներին աջակցությունը:</p>

- 6 Ապահովում է մարզի տարածքում բնական աղետների հետևանքով առաջացած խնդիրների (կարկտահարություն, ուժեղ քամիներ, ջրհեղեղ, սելավներ, գայլերի հարձակում և այլն) ուսումնասիրության աշխատանքները:
- 7 Ապահովում է մարզի տարածքում պարարտանյութերի, դիզելային վառելիքի, սերմացուների պահանջարկի ուսումնասիրությունը, բաշխման գործընթացը, գարնանացանի, աշնանացանի և բերքահավաքի աշխատանքները:
- 8 Ապահովում է Վարչության մասնակցությունը մարզի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման, պետական և այլ ծրագրերի նախագծերի մշակման ու իրականացման, ինչպես նաև մարզպետարանի տարեկան աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքները:
- 9 Ապահովում է Մարզպետարանի համագործակցությունը բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների հետ:
- 10 Ապահովում է աջակցությունը համապատասխան մարմիններին անտառների, արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացման աշխատանքներում:
- 11 Ապահովում է բնապահպանության ոլորտին վերաբերվող հարցերի ուսումնասիրությունների, քննարկումների, զեկուցագրերի և հաշվետվությունների ներկայացումը համապատասխան բնագավառներով (ընդերք, անտառ, հողային և ջրային ռեսուրսներ, շրջակա միջավայրի պահպանություն և այլն):
- 12 Ապահովում է մարզպետարանի աջակցությունը համապատասխան մարմինների կողմից մարզի անտառային տարածքներում հակահրդեհային պահպանությունն ուժեղացնելու համալիր միջոցառումների ծրագրերի կազմման և իրականացման աշխատանքներում:
- 13 Ապահովում է համագործակցությունը բնապահպանական գերատեսչական մարմինների, ծառայությունների, տեսչությունների, հասարակական կազմակերպությունների և միջազգային բնապահպանական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ:
- 14 Ապահովում է համագործակցությունը և անրաժեշտ տեղեկատվության ստացումն ու տրամադրումը ՀՀ գործադիր մարմինների, մարզի տարածքում գործող բնապահպանության և գյուղատնտեսական բնագավառների հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ:
- 15 Ապահովում է ՀՀ Լոռու մարզպետի աշխատանքային գործունեության հաշվետվության, մարզի տարեկան աշխատանքային պլանի, մոնիտորինգային հաշվետվության, աշխատանքային ծրագրերի կազմման և տեղեկանքների, զեկուցագրերի տրամադրման աշխատանքների իրականացումը:
- 16 Ապահովում է Վարչության առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթեր նախապատրաստելը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ մշակելը:
- 17 Ներկայացնում է առաջարկություններ իր անմիջական ենթակայությամբ աշխատող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու վերաբերյալ:

Իրավունքները՝

- 1 Իրականացնում է գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ՀՀ Վարչապետի ու Կառավարության որոշումներով (հրամաններով) Մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:
- 2 մարզի համայնքներից պահանջել և ստանալ տեղեկատվություն մարզի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի, հիվանդությունների և վնասատուների, մոլխխոտերի դեմ պայքարի, առավել վարակված տարածքներում իրականացված միջոցառումների կատարման վերաբերյալ:
- 3 Տեղեկատվություն ստանալ մարզի տարածքում գործող ՋՕԸ-ից, համայնքներից ոռոգման ջրի հաշվառման, ջրօգտագործողների ընկերությունների գործունեության, մարզային ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման և շահագործման աշխատանքների վերաբերյալ:
- 4 Տեղեկատվություն ստանալ մարզի տարածքում գործող անասնաբուժական ծառայություններից, համայնքներից՝ մարզում հակահամաճարակային միջոցառումների իրականացման, տոհմային աշխատանքների, արհեստական սերմնավորման կայանների, անասնազվխաքանակի հաշվառման աշխատանքների վերաբերյալ:
- 5 Տեղեկատվություն ստանալ մարզի գյուղացիական և կոլեկտիվ տնտեսություններից ագրարային ոլորտի տնտեսվարող այլ սուբյեկտներից տվյալ ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ:
- 6 Պահանջել և ստանալ տեղեկատվություն համայնքներից, կազմակերպել այցելություններ մարզի համայնքներ բնական աղետների հետևանքով առաջացած խնդիրների ուսումնասիրման և գնահատման համար:
- 7 Մարզի համայնքներից պահանջել և ստանալ տեղեկատվություն պարարտանյութերի, դիզելային վառելիքի, սերմացուների պահանջարկի և բաշխման գործընթացի, գարնանացանի, աշնանացանի և բերքահավաքի աշխատանքների վերաբերյալ:
- 8 մարզի համայնքներից, համապատասխան մարմիններից ստանալ տվյալ ոլորտներում իրականացված, իրականացվող և նախատեսվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ապահովել Վարչության ներգրավվածությունը մարզպետարանի կամ այլ գերատեսչությունների և կազմակերպությունների կողմից ստեղծված հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում, անհրաժեշտության դեպքում հրավիրել համապատասխան փորձագետներ: Ներկայացնել Վարչության տարեկան աշխատանքների նպատակների ու խնդիրների, կատարման ժամկետների, արդյունքի ձևի վերաբերյալ առաջարկություններ:
- 9 Ծառացած բնապահպանական խնդիրների վերաբերյալ հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների հետ կազմակերպել աշխատանքային քննարկումներ և հանդիպումներ:
- 10 համագործակցել ոլորտի վերահսկողության համար պատասխանատու մարմինների հետ, ստանալ տեղեկատվություն իրականացված միջոցառումների վերաբերյալ, ապահովել Վարչության ներգրավվածությունը մարզպետարանի կամ այլ գերատեսչությունների կողմից ստեղծված հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում:
- 11 Բնապահպանության ոլորտին առնչվող (ընդերք, անտառ, հողային և ջրային ռեսուրսներ, շրջակա միջավայրի պահպանություն և այլն) հարցերի վերաբերյալ համապատասխան լիազոր մարմիններից, համայնքներից և

կազմակերպություններից սահմանված կարգով ստանալ տեղեկատվություն:

- 12 Համապատասխան մարմիններից ստանալ (մարզում գործող անտառտնտեսություններ) հակահրդեհային պահպանության միջոցառումների ծրագրերի նախագծերը
- 13 Մարզում բնապահպանական ծրագրերի իրականացումը խթանելու համար շահառու մարմիններից ստանալ և փոխադարձ տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:
- 14 Համակարգել իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման աշխատանքները:
- 15 Ներկայացնել առաջարկություններ իր անմիջական ենթակայությամբ աշխատող քաղաքացիական ծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստելու, խրախուսելու վերաբերյալ:

Պարտականությունները՝

- 1 Ուսումնասիրել և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մարզպետին վերապահված լիազորությունների իրականացման արդյունքում գյուղատնտեսության և բնապահպանության ոլորտների զարգացմանն ու հայտնաբերված թերությունների վերացմանն նպատակով ներկայացնել առաջարկություններ:
- 2 Սահմանված ժամկետում ուսումնասիրել, վերլուծել, ամփոփել, առաջարկություններ ներկայացնել համապատասխան գերատեսչություններին՝ մարզի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների, վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի, առավել վարակված տարածքների վերաբերյալ:
- 3 Ուսումնասիրել, վերլուծել ստացված տեղեկատվությունը և համապատասխան գերատեսչություններին ներկայացնել տեղեկատվություն, զեկուցումներ և առաջարկություններ մարզում ջրօգտագործողների ընկերությունների, մարզային ոռոգման ջրի հաշվառման, ոռոգման ցանցերի կառուցման, պահպանման և շահագործման աշխատանքների բարելավման վերաբերյալ:
- 4 Ուսումնասիրել, վերլուծել ստացված տեղեկատվությունը և համապատասխան գերատեսչություններին ներկայացնել տեղեկատվություն, զեկուցումներ և առաջարկություններ մարզի տարածքում գործող անասնաբուժական ծառայությունների կողմից հակահամաճարակային միջոցառումների իրագործման, տոհմաբուժարանների, անասնաբուժական սպասարկման կենտրոնների, անասնազվխաքանակի հաշվառման արդյունքների և անասնաբուժների աշխատանքային պայմանագրերի կնքման վերաբերյալ:
- 5 Ուսումնասիրել, վերլուծել ստացված տեղեկատվությունը և համապատասխան գերատեսչություններին, ծրագրեր իրականացնող կազմակերպություններին ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ՝ մարզի գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների, ագրարային ոլորտի տնտեսավարողներին արտադրության կազմակերպման և զարգացման գործում աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ:
- 6 Վերլուծել ուսումնասիրության արդյունքները և առաջարկություններ ներկայացնել համապատասխան գերատեսչություններին մարզի համայնքներում բնական աղետների հետևանքով առաջացած խնդիրների վերաբերյալ:
- 7 Վերլուծել և ամփոփել ուսումնասիրության արդյունքները և առաջարկություններ,

հաշվետվություններ ներկայացնել համապատասխան գերատեսչություններին:

- 8 Ուսումնասիրել, վերլուծել, ամփոփել ստացված տեղեկատվությունը և ներկայացնել առաջարկություններ զարգացման ծրագրերում ընդգրկելու համար:
- 9 Վերլուծել քննարկումների արդյունքում բարձրացված խնդիրները և դրանց լուծման ուղղությամբ համապատասխան մարմիններին ներկայացնել առաջարկություններ:
- 10 Ուսումնասիրել և վերլուծել ստացված տեղեկատվությունը, հայտնաբերված թերությունների և խախտումների վերաբերյալ կազմել տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և ներկայացնել ոլորտի համար պատասխանատու գործադիր մարմիններին և տնտեսվարողներին, ինչպես նաև ներկայացնել օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ:
- 11 Վերլուծել և ամփոփել բնապահպանության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ ստացված տեղեկատվությունը և ներկայացնել համապատասխան առաջարկություններ, հաշվետվություններ, տեղեկանքներ և այլն:
- 12 Ուսումնասիրել ներկայացված ծրագրերի նախագծերը, անհրաժեշտության դեպքում տրամադրել համապատասխան խորհրդատվություն ծրագրերի մեջ ուղղումներ կատարելու համար և ներկայացնել մարզպետի հաստատմանը
- 13 Ուսումնասիրել, վերլուծել և ամփոփել բնապահպանական ծրագրային առաջարկություններն ու դրույթները, դրանց նպատակային իրականացման համար ներկայացնել առաջարկություններ:
- 14 Ուսումնասիրել, վերլուծել և համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել վերջիններիս իրավասությանը վերաբերվող մարզին առնչվող հարցեր, ինչպես նաև փոխհամաձայնեցված գործունեության կազմակերպման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:
- 15 Գնահատել ենթակա աշխատողների կողմից կատարված աշխատանքները

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթությունը, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գյուղատնտեսության կամ բնապահպանության բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

ընդհանրական կոմպետենցիաները՝

- Աշխատակազմի կառավարում
- Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
- Որոշումների կայացում
- Ծրագրերի կառավարում
- Խնդրի լուծում
- Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները՝

- Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
- Բանակցությունների վարում
- Փոփոխությունների կառավարում

- Փաստաթղթերի նախապատրաստում
- Տարածքային կառավարում
- Ժամանակի կառավարում
- Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- կառավարում արտակարգ իրավիճակներում

4 Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը:

«« ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

 Invalid signature



ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ